Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
նոյեմբերի 15-ի N 1442 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգի նպատակն արտակարգ իրավիճակների և ռազմական դրության պայմաններում, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի իրավասու մարմնի (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն) կողմից էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման և կառավարման գործառույթների ապահովումն է և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության ու էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողների (այսուհետ՝ օպերատոր) փոխհարաբերությունների կանոնակարգման իրավական հիմքերի սահմանումն է:

2. Էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման կառավարումն իրակա-նացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

3. Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի կառավարումն ու շահագործումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների, սույն կարգի և այլ իրավական ակտերի:

4. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ բոլոր էլեկտրոնային

հաղորդակցության ցանցերի կառավարումն ու շահագործումն ապահովելու նպատակով նախապատրաստական շրջանում իրականացվող միջոցառումներն են՝

1) էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և համակարգերի կառավարման պլանի մշակում.

2) արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ կապի միջոցների, ցանցի և ենթակառուցվածքների ստեղծման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկության ներկայացում.

3) կառավարման կետերի ստեղծում և ապահովում ժամանակակից կապի միջոցներով, այդ թվում ֆիքսված հեռախոսակապով, բջջային հեռախոսակապով, ռադիոկապով, միջազգային ելքի կապուղիներով.

4) տեղեկատվության ստացման և փոխանցման հուսալի համակարգի ստեղծում և ներդրում.

5) արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակահատվածում պետական մարմիններին կապի գծերի, կապուղիների, ռադիոհաճախականության հատկացման ցանկի մշակում:

5. Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից իրականացվող միջոցառումներն են՝

1) էլեկտրոնային հաղորդակցության միջոցների տրամադրում պետական մարմիններին և դրանց անխափան շահագործման ապահովում.

2) օպերատորների գործունեության համակարգում.

3) օպերատորների կողմից տրամադրված տեղեկատվության գաղտնիության ապահովում.

4) վթարավերականգնողական աշխատանքների օպերատիվ կազմակերպում.

5) էլեկտրոնային հաղորդակցության համակարգերի պահպանություն և արտաքին միջամտություններից ապահովում:

6. Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից ներկայացված հայտերի հիման վրա կապի միջոցների, այդ թվում՝ ֆիքսված հեռախոսակապի, բջջային հեռախոսակապի, ռադիոկապի, միջազգային ելքի կապուղիների առանձնացումը և տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն մուտքագրվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում:

7. Արտակարգ իրավիճակներում էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի կառավարումն ու շահագործումն իրականացվում է տվյալ ցանցերը տնօրինող (օգտագործող) օպերատորների կողմից՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից ներկայացված հայտերին համապատասխան:

8. Հայտը ներառում է այն վայրը, որտեղ անհրաժեշտ է ապահովել կապով, պահանջվող կապի տեսակը և աշխատանքների իրականացման ժամանակահատվածը:

9. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից ներկայացված հայտն ստանալուց հետո 1-օրյա ժամկետում այն ուղարկում է էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող օպերատորներին՝ հայցելով տեղեկատվություն հայտում նշված վայրում կապի ապահովման համար տեխնիկական հնարավորությունների և այդ աշխատանքների իրականացման նպատակով պահանջվող ֆինանսական միջոցների վերաբերյալ:

10. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը սույն կարգի 9-րդ կետով պահանջվող տեղեկատվությունն էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող օպերատորներից ստանալուց հետո այն 1-օրյա ժամկետում համաձայնեցնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ,

որից հետո պատվիրում է համապատասխան օպերատորին՝ հայտում նշված վայրում կապի ապահովման աշխատանքները:

11. Սույն կարգի 10-րդ կետում նշված աշխատանքներն ավարտելուց հետո կազմվում է ընդունման-հանձնման ակտ և ակտի մեկ օրինակը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն:

12. Համագործակցությունը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության և օպերատորների միջև իրականացվում է երկկողմանի համաձայնագրերով կամ պայմանագրային հիմունքներով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

13. Սույն կարգի պահանջների համաձայն էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի, տեխնիկական միջոցների օգտագործման դիմաց հասցված իրական վնասը և բաց թողնված օգուտի փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ